Հավելված 1
Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության
2019 թվականի դեկտեմբերի 27-ի N 547-Լ որոշմամբ
Գործում է սկսած 2020 թվականի հունվարի 1 –ից

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել:

Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք Բանկի կայքում, խնդրում ենք ուշադրություն դարձնել տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին:

Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք Բանկի տարածքում կամ թղթային տարբերակով, մանրամասն տեղեկությունների համար խնդրում ենք այցելել Բանկի ինտերնետային կայք՝ www.idbank.am հասցեով (ուշադրություն դարձնելով տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին), դիմել Բանկի ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարել Բանկի հեռախոսազանգերի կենտրոն՝ 010 59 33 33 , 060 27 33 33 համարով:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

«ԱՊԱՀՈՎ» ԱՎԱՆԴԻ[1]

1. Ֆիզիկական անձանցից ներգրավված «ԱՊԱՀՈՎ» ժամկետային ավանդի տարեկան տոկոսադրույքներն **<u>առանց ավելացման իրավունքի</u>** ներդնման դեպքում.

Տարեկան անվանական տոկոսադրույք *(առանց ավելացման իրավունքի)*								
Տոկոսների վճարման հաճախականություն								
Արժույթ	ՀՀ դրամ		ԱՄՆ դոլար		Եվրո		Ռուբլի	
Ավանդի ժամկետ	Ամսական	Ժամկետի վերջում	Ամսական	Ժամկետի վերջում	Ամսական	Ժամկետի վերջում	Ամսական	Ժամկետի վերջում
31-60 օր	-	5.00%	-	1.00%	-	0.25%	-	4.00%
61-90 օր	-	5.50%	-	1.50%	-	0.50%	-	4.25%
91-120 օր	5.50%	6.00%	1.50%	2.00%	0.50%	0.75%	4.00%	4.50%
121-150 օր	6.00%	6.50%	1.75%	2.25%	0.50%	0.75%	4.25%	4.75%
151-180 օր	6.50%	7.00%	1.75%	2.25%	0.75%	1.00%	4.50%	5.00%
181-210 օր	7.00%	7.50%	2.50%	3.00%	1.00%	1.25%	4.75%	5.25%
211-240 օր	7.00%	7.50%	2.50%	3.00%	1.00%	1.25%	5.00%	5.50%
241-270 օր	7.50%	8.00%	2.50%	3.00%	1.25%	1.50%	5.25%	5.75%
271-300 օր	7.50%	8.00%	3.25%	3.75%	1.25%	1.50%	5.50%	6.00%
301-330 օր	8.00%	8.50%	3.25%	3.75%	1. 25%	1.50%	5.75%	6.25%
331-365 օր	8.00%	8.50%	3.25%	3.75%	1.25%	1.50%	6.00%	6.50%
366-730 օր	8.75%	9.25%	4.00%	4.50%	1.50%	1.75%	-	-
731-1096 օր	9.00%	9.50%	-	-	-	-	-	-

2. Ֆիզիկական անձանցից ներգրավված «ԱՊԱՀՈՎ» ժամկետային ավանդի տարեկան տոկոսադրույքներն **<u>ավելացման իրավունքով</u>** ներդնման դեպքում.

Տարեկան անվանական տոկոսադրույք *(ավելացման իրավունքով)*								
Տոկոսների վճարման հաճախականություն								
Արժույթ	ՀՀ դրամ		ԱՄՆ դոլար		Եվրո		Ռուբլի	
Ավանդի ժամկետ	Ամսական	Ժամկետի վերջում	Ամսական	Ժամկետի վերջում	Ամսական	Ժամկետի վերջում	Ամսական	Ժամկետի վերջում
91-120 օր	5.00%	5.50%	1.00%	1.50%	-	0.25%	3.00%	3.50%
121-150 օր	5.50%	6.00%	1.25%	1.75%	-	0.25%	3.25%	3.75%
151-180 օր	6.00%	6.50%	1.25%	1.75%	0.25%	0.50%	3.50%	4.00%
181-210 օր	6.50%	7.00%	1.75%	2.25%	0.50%	0.75%	3.75%	4.25%
211-240 օր	6.50%	7.00%	2.00%	2. 50%	0.50%	0.75%	4.00%	4.50%
241-270 օր	7.00%	7.50%	2.00%	2.50%	0.75%	1.00%	4.25%	4.75%
271-300 օր	7.00%	7.50%	2.75%	3. 25%	0.75%	1.00%	4.50%	5.00%
301-330 օր	7.50%	8.00%	2.75%	3.25%	0.75%	1.00%	4.75%	5.25%
331-365 օր	7.50%	8.00%	2.75%	3.25%	0.75%	1.00%	5.00%	5.50%
366-450 օր	8.25%	8.75%	3.50%	4.00%	1.00%	1.25%	-	-

3. Առանց ավելացման իրավունքի «Ապահով» ավանդատեսակի համար՝ 1,097 օր և ավել ժամկետով, իսկ ավելացման իրավունքով «Ապահով» ավանդատեսակի համար՝ 451 օր և ավել ժամկետով ներգրավվող և/կամ 100,000,000 (հարյուր միլիոն) ՀՀ դրամը, 200,000 (երկու հարյուր հազար) ԱՄՆ դոլարը, 200,000 (երկու հարյուր հազար) եվրոն կամ 366 օր և ավել ժամկետով ներգրավվող և/կամ 12,000,000 (տասներկու միլիոն) ՌԴ ռուբլին գերազանցող ավանդների տարեկան տոկոսադրույքն ու սպասարկման պայմանները սահմանվում են լրացուցիչ պայմանավորվածությամբ:
4. Ավելացման իրավունքով ավանդի գումարը կարող է ավելացվել առանց քանակային սահմանափակումների և ավելացումների արդյունքում այն չի կարող գերազանցել 100,000,000 (հարյուր միլիոն) ՀՀ դրամը, 200,000 (երկու հարյուր հազար) ԱՄՆ դոլարը, 200,000 (երկու հարյուր հազար) եվրոն, 12,000,000 (տասներկու միլիոն) ՌԴ ռուբլին: Ավանդային պայմանագրի գործողության ընթացքում ավելացված գումարի նկատմամբ տոկոսների հաշվարկը կատարվում է ավանդային պայմանագրով սահմանված տոկոսադրույքով, բացառությամբ ավանդի գործողության ժամկետի վերջին 90 օրը, որի համար տոկոսների հաշվարկը կատարվում է տվյալ պահին Բանկում գործող տվյալ արժույթի ցպահանջ տոկոսադրույքով: Ավելացման իրավունքով ավանդի գումարի ավելացման իրավունք ունի ինչպես Ավանդատուն, այնպես էլ ցանկացած անձ, ով ցանկանում է ավելացնել ավանդատուի ավանդի գումարը, եթե այլ բան նախատեսված չէ ավանդային պայմանագրով:
5. Ավանդի նվազագույն չափը սահմանվում է 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ կամ 200 (երկու հարյուր) ԱՄՆ դոլար կամ 200 (երկու հարյուր) Եվրո կամ 12,000 (տասներկու հազար) ՌԴ ռուբլի, որը պետք է պահպանվի սույն ամփոփագրի 1-ին և 2-րդ կետերում նշված սանդղակների համապատասխան տոկոսները ստանալու համար:

6. Ավանդատուն կարող է ավանդը ներդնել հօգուտ երրորդ անձի, որի կողմից ավանդը տնօրինելու իրավունքը ձեռք է բերվում վերջինիս կողմից ավանդի հետ առաջին գործարքը կատարելու, Բանկին այդ իրավունքի վրա հիմնված առաջին պահանջը ներկայացնելու կամ իր մտադրությունը գրավոր հայտնելու պահից, իսկ ավանդատուն (ավանդի գումարը ներդրած անձը) կորցնում է ավանդի նկատմամբ իրավունքը:

6.1. Եթե երրորդ անձը չափահաս և գործունակ ֆիզիկական անձ է, հօգուտ ում ձևակերպվում է ավանդային պայմանագիրը՝ առանց տվյալ երրորդ անձի գիտության, ապա ավանդատուն ինքն է ստանձնում Բանկին տվյալ երրորդ անձի անձը հաստատող փաստաթղթերի (դրանց տվյալների) ներկայացման պատասխանատվությունը՝ վերջինից բխող բոլոր իրավական հետևանքներով հանդերձ:

7. Ավանդի հաշվում ավանդատուի անունով կարող են մուտքագրվել նաև երրորդ անձանցից ստացված դրամական միջոցները՝ նրա ավանդի հաշվի մասին անհրաժեշտ տվյալների նշումով, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

8. Ավանդի նկատմամբ հաշվարկված տոկոսները վճարվում են ամսական հաճախականությամբ կամ ժամկետի վերջում՝ պայմանագրի համաձայն:

9. Ցանկացած արժույթով ավանդ ներդնելիս բացվում է ՀՀ դրամով բանկային հաշիվ:

10. Արտարժույթով ներդրված ավանդի տոկոսագումարներն ավանդատուի ցանկությամբ կարող են վճարվել այն արտարժույթով, որով ներգրավվել է ավանդը, բացառությամբ՝ ՀՀ ԿԲ կողմից սահմանված դեպքերի: Արտարժույթով ներդրված ավանդի դեպքում, եթե ավանդատուն ցանկություն չի հայտնել ավանդի տոկոսների վճարումը ստանալ տվյալ արտարժույթով, ապա տոկոսագումարները վճարվում են ՀՀ դրամով վճարման պահին Բանկում տվյալ արտարժույթի համար սահմանված առքի փոխարժեքով:

11. Ավանդի ներդնման դեպքում ավանդը կամ դրա մի մասը ժամկետից շուտ պահանջելիս կատարվում է ավանդի ներդրման պահից մինչև ընդհատման նախորդ օրը հաշվարկված տոկոսագումարի վերահաշվարկ և վերադարձվող գումարի նկատմամբ տոկոսագումարները հաշվարկվում են Բանկում գործող տվյալ արժույթի ցպահանջ ավանդի տոկոսադրույքով:

12. Մինչ այդ ավանդատուին վճարված (բանկային հաշվին կամ այլ պարտավորություններ հաշվին փոխանցված) տոկոսագումարները գերազանցելու դեպքում տարբերության չափով գումար է գանձվում հետ վերադարձվող ավանդի գումարից, պակաս լինելու դեպքում տոկոսագումարների տարբերությունը վճարվում է ավանդատուին:

13. Պայմանագրով սահմանված տոկոսադրույքը հաշվարկվում է ավանդի օրական մնացորդի նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:

14. Բանկային ավանդի գումարի նկատմամբ տոկոսները հաշվեգրվում են ավանդը ներդնելու հաջորդ օրվանից մինչև այն ավանդատուին վերադարձնելու կամ ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրը:

15. Ավանդային պայմանագրի կնքման ժամանակ ավանդատուի ցանկությամբ ավանդային պայմանագրի գործողության ընթացքում հաշվարկված տոկոսագումարը կարող է ավելացվել (կապիտալացվել) ավանդի գումարին՝ պայմանագրով նշված տոկոսների վճարման հաճախականությամբ, եթե դա նախատեսված է ավանդային պայմանագրով: Տոկոսների կապիտալացման դեպքում ավանդի մնացորդի գումարը կարող է գերազանցել սույն տեղեկատվական ամփոփագրով սահմանված համապատասխան արժույթների համար նախատեսված առավելագույն գումարի սահմանաչափերը:

16. Եթե ավանդի վերջին օրը ոչ աշխատանքային օր է, ապա ավանդի գումարն ավանդատուին ետ է վերադարձվում հաջորդ աշխատանքային օրը, ընդ որում՝ ոչ աշխատանքային օրվա համար ավանդի նկատմամբ շարունակում է գործել ավանդային պայմանագրով նախատեսված տոկոսադրույքը:
17. Եթե Բանկի որևէ մասնաճյուղ աշխատում է տվյալ ոչ աշխատանքային օրվա ընթացքում, ապա դա դեռևս Բանկի համար չի համարվում աշխատանքային օր:
18. Ավանդատուի ցանկությամբ ավանդի պայմանագրի ժամկետը կարող է երկարաձգվել ավանդի ժամկետը լրանալու օրը տվյալ պահին Բանկում գործող այդ ավանդատեսակի համար տեղեկատվական ամփոփագրով սահմանված համապատասխան պայմաններով (մասնավորապես՝ ավանդային պայմանագրի երկարաձգվող ժամկետին համապատասխանող տվյալ արժույթի առավելագույն տոկոսադրույքով, իսկ տոկոսագումարների վճարման պարբերականության/հաճախականության փոփոխության դեպքում, երբ նախորդ տեղեկատվական ամփոփագրում նշված տոկոսագումարների վճարման հաճախականությունը նշված չէ նոր (գործող) տեղեկատվական ամփոփագրում, ապա ավանդային պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվում է տոկոսագումարների վճարման հաջորդ, ամենամոտիկ, երկար հաճախականությամբ):
    18.1. Եթե ավանդային պայմանագրի գործողության ժամկետի ավարտին տվյալ ավանդատեսակն այլևս չի գործում Բանկում, նույնիսկ եթե այն կնքելիս Ավանդատուն նախապես նշել է ավտոմատ երկարաձգման իրավունքի դաշտը կամ նախապես Բանկ է ներկայացրել գործող ավանդային պայմանագրի ժամկետի երկարաձգման մասին դիմում, ապա այդ ավանդային պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվում է երկարաձգման պահին տվյալ ժամկետին համապատասխանող Բանկում գործող ամենաբարձր անվանական տոկոսադրույք ունեցող համապատասխան արժույթով ավանդատեսակի պայմաններով: Իսկ եթե երկարաձգման պահին տվյալ ժամկետին համապատասխանող ավանդատեսակ չկա Բանկում, ապա այդ ժամկետը երկարաձգվում է դրան առավել մոտ ժամկետին համապատասխանող Բանկում գործող ամենաբարձր անվանական տոկոսադրույք ունեցող համապատասխան արժույթով ավանդատեսակի պայմաններով: Ընդ որում՝ ավանդային պայմանագրով նախատեսված ժամկետին համապատասխանող ավանդատեսակ չլինելու դեպքում այլ ավանդատեսակով (առավել մոտ ժամկետով) ավանդային պայմանագրի այլ պայմանները (օրինակ՝ ավանդի գումարի ավելացման/նվազեցման և այլ պայմանները) հաշվի չեն առնվում այլ ավանդատեսակով երկարաձգման դեպքում:
    18.2. Եթե ավանդատուի անձը հաստատող փաստաթղթի տվյալները փոխվել են, ապա այդ դեպքում ավանդային պայմանագրի գործողության ժամկետի երկարաձգումն իրականացվում է ավանդատուի անձը հաստատող նոր փաստաթղթի տվյալների հիման վրա:
    18.3. Երկարաձգման պահին ավանդատուն կարող է ավելացնել/նվազեցնել ավանդի գումարը:
19. Ավանդային պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո ավանդը չպահանջելու դեպքում, ավանդի գումարը փոխանցվում է ավանդատուի ցպահանջ հաշվին՝ ցպահանջ ավանդի պայմաններով, և դրա նկատմամբ տոկոսագումարները հաշվեգրվում են Բանկում տվյալ պահին գործող տվյալ արժույթի ցպահանջ ավանդների համար նախատեսված պայմաններով:

20. Բանկը չի կարող ավանդային պայմանագրով որոշված տոկոսագումարների չափը միակողմանի նվազեցնել, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:
21. Բանկն իրավունք ունի միակողմանի փոխել ցպահանջ ավանդների և բանկային հաշվում եղած դրամական միջոցների համար վճարվող տոկոսների չափը՝ դրանք ուժի մեջ մտնելուց 15 /տասնհինգ/ օր առաջ www.idbank.am Բանկի պաշտոնական կայք-էջում հրապարակելու միջոցով:
22. Ավանդների վերադարձելիությունը երաշխավորվում է «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն:

    Բանկում ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորված է «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի» կողմից՝ հատուցման ենթակա ավանդների չափերով, մասնավորապես՝

«ԱյԴի Բանկ»կ ՓԲԸ ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորված է «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի» կողմից՝ հատուցման ենթակա ավանդների չափերով, մասնավորապես՝				
Ավանդի արժութային կառուցվածքը	Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ	Եթե նույն բանկում ունեք միայն արտարժու-թային ավանդ	Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ	
			Եթե դրամային ավանդը 5 միլիոն դրամից ավել է	Եթե դրամային ավանդը 5 միլիոն դրամից պակաս է
Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	10 միլիոն ՀՀ դրամ	5 միլիոն ՀՀ դրամ	10 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)	5 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ հինգ միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով)

23. Բանկին վերապահված է ավանդի դիմաց ստացված տոկոսներից օրենքով սահմանված կարգով եկամտային հարկը (10%) հաշվարկելու և վճարելու հարկային գործակալի իրավունքը:
24. Ավանդային պայմանագրի շուրջ ծագած վեճերը կարգավորվում են կողմերի միջև բանակցությունների միջոցով, իսկ նման համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

    Ավանդատուն իրավունք ունի ավանդային գործարքից բխող պահանջները ներկայացնել ֆինանսական համակարգի հաշտարարին (Հասցե՝ 0010 ք. Երևան, Մ. Խորենացու փող. 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն 7-րդ հարկ էլ. փոստ՝ info@fsm.am Հեռախոս՝ (+37460) 70 11 11, Ֆաքս՝ (+37410) 58 24 21)՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն, կամ դիմել դատարան (իսկ Բանկի և հաճախորդի միջև արբիտրաժային համաձայնության առկայության դեպքում՝ համապատասխան արբիտրաժային տրիբունալ) կամ ՀՀ կենտրոնական բանկ:

    Բանկը պարտավոր է ավանդատուի կողմից ներկայացված բողոք-պահանջը ստանալու պահից սկսած՝ 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում վերջինիս տրամադրել վերջնական պատասխան: Բանկի վերջնական, գրավոր պատասխանի հետ համաձայն չլինելու դեպքում այն ստանալու պահից կամ 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում իր բողոք-պահանջի պատասխանը չստանալու դեպքում ավանդատուն իրավունք է ձեռք բերում վեց ամսվա ընթացքում

պահանջը ներկայացնել ֆինանսական համակարգի հաշտարարին: Ընդ որում, եթե գույքային պահանջի չափը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, ապա ֆինանսական համակարգի որոշումները չեն կարող վիճարկվել Բանկի կողմից:

25. Բանկի կողմից հեռահար սպասարկումն իրականացվում է IDBanking առցանց համակարգի միջոցով: Բանկի հեռահար սպասարկման ծառայությունների մատուցման կարգն ու պայմանները ներկայացված են «Հեռահար բանկային ծառայությունների մատուցման հրապարակային պայմաններում»:

26. **Հաճախորդը իրավունք ունի Բանկի հետ հաղորդակցվել իր նախընտրած տարբերակով՝ էլ. փոստ կամ փոստային կապ: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումը ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիություն:**

27. Ավանդային հաշվից քաղվածքները տրամադրվում են հաճախորդին առնվազն ամիսը 1 /մեկ/ անգամ՝ երեսնօրյա պարբերականությամբ, եթե պայմանագրով կամ օրենքով այլ ժամկետ սահմանված չէ:

28. Ավանդատուի բանկային հաշվին անկանխիկ ձևով մուտքագրված դրամական միջոցները, որոնք ուղղվել են ավանդային հաշվին, հետագայում բանկային հաշվից կանխիկ ետ ստանալու դեպքում ավանդատուից գանձվում է կանխիկացման միջնորդավճար՝ Բանկի կողմից հաստատված սակագների համաձայն:

29. Ավանդային հաշվից քաղվածքների և վճարային փաստաթղթերի կրկնօրինակների ու այլ տեղեկությունների տրամադրման սակագները սահմանվում են՝ ըստ իրականացված գործարքի ժամկետի վաղեմության, ընթացիկ հաշիվների քաղվածքների տրամադրման սակագների չափով (համաձայն ««Այդի Բանկ» ՓԲԸ հաճախորդներին մատուցվող ծառայությունների սակագներ»-ի):

30. «Դիսկոնտ» ավանդատեսակի երկարաձգումներն իրականացվում են տվյալ պահին գործող առանց ավելացման իրավունքի «Ապահով» ավանդատեսակի համապատասխան պայմաններով՝ ըստ ժամկետային միջակայքի:

31. **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝** ՁԵՐ ՀԱՇՎՈՒՄ ԱՌԿԱ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԵԿԱՄՈՒՏ ԿՍՏԱՆԱՅԻՔ ԴՈՒՔ, ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ԱՎԱՆԴԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՍԱՀՄԱՎԱԾ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ՎԱՍՏԱԿԱԾ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄԱԲԵՐՈՒԹՅԱՄ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԿԱՐՈՂ ԵՔ ԳՏՆԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԱՍՑԵՈՒՄ՝ Տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկ:

32. Տարեկան տոկոսային եկամտաբերությունը (APY)՝ հաշվարկված 366 օր ժամկետով ՀՀ դրամով ավանդի համար առանց եկամտային հարկի.

	Ամսական	**Ժամկետի վերջում**
Առանց ավելացման իրավունքի ներդնման դեպքում	9.11%	9.25%
Ավելացման իրավունքով ներդնման դեպքում	8.57%	8.75%

$$A = \sum_{n=1}^{N} \frac{K_n}{(1 + APY)^{\frac{D_n}{365}}},$$

որտեղ՝

APY-ն տարեկան տոկոսային եկամտաբերությունն է,

A-ն՝ ավանդի սկզբնական գումարը,

n-ը՝ ավանդի դիմաց դրամական հոսքերի հերթական համարը,

N-ը՝ ավանդի դիմաց դրամական հոսքերի վերջին համարը (ներառյալ նաև ավանդի ներդրման պահին դրամական հոսքը), որից հետո ավանդային պայմանագրի ժամկետը համարվում է ավարտված,

Kn-ը՝ ավանդի ներդրման պահին և/կամ ավանդի գործողության ընթացքում ներդրված ավանդի և/կամ կապիտալացված տոկոսագումարների, առկայության դեպքում պարտադիր վճարների հոսքերը,

Dn-ը այն թիվն է, որը ցույց է տալիս, թե քանի օր է անցել ավանդի ներդրման օրից մինչև ավանդի դիմաց կատարվող հերթական՝ n-րդ դրամական հոսքերը ներառյալ: Այն դեպքում, երբ ավանդի ներդրման պահին է դրամական հոսքերը, D1 = 0:

33. Տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկի օրինակներ.

Օրինակ 1. Առանց ավելացման իրավունքի ներդնման դեպք.

Ավանդի ներդնման օրը՝ 01.05.2019թ. (չենք հաշվարկում ավանդի ներդնման օրը)
Ավանդի գումարը՝ 100,000 ՀՀ դրամ
Տարեկան տոկոսադրույքը՝ 9.50%
Տոկոսագումարի վճարումը՝ ժամկետի վերջում (չենք հաշվարկում ավանդի վճարման օրը)
Ավանդի ժամկետը՝ 1,096 օր (01.05.2022թ.)
Եկամտային հարկի չափը՝ 10%
Հաշվարկված տոկոսագումարը. 100,000 x 9.50% : 365 x 1094 = 28,474 ՀՀ դրամ Ընդհանուր հաշվարկված տոկոսագումարը կազմում է՝ 28,474 ՀՀ դրամ
Եկամտային հարկը՝ 28,474 x 10% = 2,847.4 ՀՀ դրամ
Ավանդատուի ստացած տոկոսային եկամուտը՝ 25,626.6 ՀՀ դրամ

Օրինակ 2. Ավելացման իրավունքով ներդնման դեպք.

Ավանդի ներդնման օրը՝ 01.05.2019թ. (չենք հաշվարկում ավանդի ներդնման օրը)
Ավանդի գումարը՝ 100,000 ՀՀ դրամ
Ավանդի գումարը ավելացվում է 50,000 ՀՀ դրամ 24.07.2019թ.-ին
Տարեկան տոկոսադրույքը՝ 8.75%
Տոկոսագումարի վճարումը՝ ժամկետի վերջում (չենք հաշվարկում ավանդի վճարման օրը)
Ավանդի ժամկետը՝ 450 օր (24.07.2020թ.)
Եկամտային հարկի չափը՝ 10%

Հաշվարկված տոկոսագումարը՝ 100,000 x 8.75% : 365 x 448 = 10,739.7 ՀՀ դրամ 50,000 x 8.75% : 365 x 364 = 4,363 ՀՀ դրամ Ընդհանուր հաշվարկված տոկոսագումարը՝ կազմում է՝ 15,102.7 ՀՀ դրամ
Եկամտային հարկը՝ 15,102.7 x 10% = 1,510.3 ՀՀ դրամ
Ավանդատուի ստացած տոկոսային եկամուտը՝ 13,592.4 ՀՀ դրամ

34. Ավանդը ձևակերպելու համար բանկ է ներկայացվում հետևյալ փաստաթղթերը
    - ✓ անձը հաստատող փաստաթուղթ
    - ✓ հանրային ծառայությունների համարանիշ կամ ՀԾՀ չստանալու վերաբերյալ տեղեկանք
35. Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է «Ճանաչիր քո հաճախորդին» սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ տեղեկություններ:
36. Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (FATCA) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն Բանկը հաճախորդի ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է լրացուցիչ տեղեկություններ հավաքագրել:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ

Հավելված 2
Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության
2019 թվականի դեկտեմբերի 27-ի N 547-Լ որոշմամբ
Գործում է սկսած 2020 թվականի հունվարի 1 –ից

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել:

Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք Բանկի կայքում, խնդրում ենք ուշադրություն դարձնել տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին:

Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք Բանկի տարածքում կամ թղթային տարբերակով, մանրամասն տեղեկությունների համար խնդրում ենք այցելել Բանկի ինտերնետային կայք՝ www.idbank.am հասցեով (ուշադրություն դարձնելով տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին), դիմել Բանկի ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարել Բանկի հեռախոսազանգերի կենտրոն՝ 010 59 33 33 , 060 27 33 33 համարով:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ
«ՑՊԱՀԱՆՋ» ԱՎԱՆԴԻ

1. Սահմանել «ԱյԴի Բանկ» ՓԲԸ ֆիզիկական անձանցից ներգրավված ցպահանջ ավանդի տարեկան տոկոսադրույքները.

Ժամկետը	**Տարեկան պարզ տոկոսադրույքը**			
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Ռուբլի
անժամկետ	1.0%	0.25%	0.15%	0.6%

2. 50 մլն ՀՀ դրամ, 100 հազ. ԱՄՆ դոլարը, 100 հազ. Եվրոն, 8.5 մլն ՌԴ ռուբլին գերազանցող ավանդների տարեկան տոկոսադրույքը և սպասարկման պայմանները սահմանվում են լրացուցիչ պայմանավորվածությամբ:

3. Ավանդի նվազագույն չափը սահմանվում է 30.000 (երեսուն հազար) ՀՀ դրամ կամ համարժեք ԱՄՆ դոլար,Եվրո կամ ՌԴ ռուբլի, որը պետք է պահպանվի սույն ամփոփագրի 1-ին կետում նշված տոկոսները ստանալու համար:

4. Ավանդային պայմանագրի գործողության ընթացքում ավանդատուն կարող է ավելացնել ավանդի գումարը, որի նկատմամբ նույնպես հաշվարկվում են ավանդային պայմանագրով սահմանված տոկոսները:
5. Ավանդի նկատմամբ հաշվարկված տոկոսները վճարվում են ամսական հաճախականությամբ կամ ժամկետի վերջում՝ համաձայն պայմանագրի:
6. Ցանկացած արժույթով ավանդ ներդնելիս բացվում է ՀՀ դրամով բանկային հաշիվ:

7. Արտարժույթով ներդրված ավանդի տոկոսագումարներն ավանդատուի ցանկությամբ կարող են վճարվել այն արտարժույթով, որով ներգրավվել է ավանդը, բացառությամբ՝ ՀՀ ԿԲ կողմից սահմանված դեպքերի: Արտարժույթով ներդրված ավանդի դեպքում, եթե ավանդատուն ցանկություն չի հայտնել ավանդի տոկոսների վճարումը ստանալ տվյալ արտարժույթով, ապա տոկոսագումարները վճարվում են ՀՀ դրամով վճարման պահին Բանկում տվյալ արտարժույթի համար սահմանված առքի փոխարժեքով:
8. Տոկոսադրույքը հաշվարկվում է ավանդի օրական մնացորդի նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:
9. Ավանդի հաշվում ավանդատուի անունով կարող են մուտքագրվել նաև երրորդ անձանցից ստացված դրամական միջոցները՝ նրա ավանդի հաշվի մասին անհրաժեշտ տվյալների նշումով, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:
10. Բանկային ավանդի գումարի նկատմամբ տոկոսները հաշվեգրվում են ավանդը ներդնելու հաջորդ օրվանից մինչև այն ավանդատուին վերադարձնելու կամ ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրը:
11. Բանկն իրավունք ունի միակողմանի փոխել ցպահանջ ավանդների և բանկային հաշվում եղած դրամական միջոցների համար վճարվող տոկոսների չափը՝ վերջինիս վերաբերյալ տեղեկատվությունը ուժի մեջ մտնելու պահից 15 օր առաջ Բանկի պաշտոնական կայքէջում հրապարակելու միջոցով:
12. Ավանդների վերադարձելիությունը երաշխավորվում է «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն:

    Բանկում ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորված է «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի» կողմից՝ հատուցման ենթակա ավանդների չափերով, մասնավորապես՝

«ԱյԴի Բանկ»կ ՓԲԸ ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորված է «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի» կողմից՝ հատուցման ենթակա ավանդների չափերով, մասնավորապես՝				
Ավանդի արժութային կառուցվածքը	Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ	Եթե նույն բանկում ունեք միայն արտարժու-թային ավանդ	Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ	
			Եթե դրամային ավանդը 5 միլիոն դրամից ավել է	Եթե դրամային ավանդը 5 միլիոն դրամից պակաս է
Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	10 միլիոն ՀՀ դրամ	5 միլիոն ՀՀ դրամ	10 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)	5 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ հինգ միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով)

13. Բանկին վերապահված է ավանդի դիմաց ստացված տոկոսներից օրենքով սահմանված կարգով եկամտահարկը (10%) հաշվարկելու և վճարելու հարկային գործակալի իրավունքը:

14. Ավանդային պայմանագրի շուրջ ծագած վեճերը կարգավորվում են կողմերի միջև բանակցությունների միջոցով, իսկ նման համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

    Ավանդատուն իրավունք ունի ավանդային գործարքից բխող պահանջները ներկայացնել ֆինանսական համակարգի հաշտարարին (Հասցե՝ 0010 ք. Երևան, Մ. Խորենացու փող. 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն 7-րդ հարկ էլ. փոստ՝ info@fsm.am Հեռախոս՝ (+37460) 70 11 11, Ֆաքս՝ (+37410) 58 24 21)՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն, կամ դիմել դատարան (իսկ Բանկի և հաճախորդի միջև արբիտրաժային համաձայնության առկայության դեպքում՝ համապատասխան արբիտրաժային տրիբունալ) կամ ՀՀ կենտրոնական բանկ:

    Բանկը պարտավոր է ավանդատուի կողմից ներկայացված բողոք-պահանջը ստանալու պահից սկսած՝ 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում վերջինիս տրամադրել վերջնական պատասխան: Բանկի վերջնական, գրավոր պատասխանի հետ համաձայն չլինելու դեպքում այն ստանալու պահից կամ 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում իր բողոք-պահանջի պատասխանը չստանալու դեպքում ավանդատուն իրավունք է ձեռք բերում վեց ամսվա ընթացքում պահանջը ներկայացնել ֆինանսական համակարգի հաշտարարին: Ընդ որում, եթե գույքային պահանջի չափը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, ապա ֆինանսական համակարգի որոշումները չեն կարող վիճարկվել Բանկի կողմից:

15. Բանկի կողմից հեռահար սպասարկումն իրականացվում է IDBanking առցանց համակարգի միջոցով: Բանկի հեռահար սպասարկման ծառայությունների մատուցման կարգն ու պայմանները ներկայացված են «Հեռահար բանկային ծառայությունների մատուցման հրապարակային պայմաններում»:
16. **Հաճախորդը իրավունք ունի Բանկի հետ հաղորդակցվել իր նախընտրած տարբերակով՝ էլ. փոստ կամ փոստային կապ: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումը ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիություն:**
17. Ավանդային հաշվից քաղվածքները տրամադրվում են հաճախորդին առնվազն ամիսը 1 անգամ՝ երեսնօրյա պարբերականությամբ, եթե պայմանագրով կամ օրենքով այլ ժամկետ սահմանված չէ:
18. Ավանդատուի բանկային հաշվին անկանխիկ ձևով մուտքագրված դրամական միջոցները, որոնք ուղղվել են ավանդային հաշվին, հետագայում բանկային հաշվից կանխիկ ետ ստանալու դեպքում ավանդատուից գանձվում է կանխիկացման միջնորդավճար՝ Բանկի կողմից հաստատված սակագների համաձայն:
19. Ավանդային հաշվից քաղվածքների և վճարային փաստաթղթերի կրկնօրինակների և այլ տեղեկությունների տրամադրման սակագները սահմանվում են ըստ իրականացված գործարքի ժամկետի վաղեմության, ընթացիկ հաշիվների քաղվածքների տրամադրման սակագների չափով (համաձայն ««ԱՅԴԻ Բանկ» ՓԲԸ հաճախորդներին մատուցվող ծառայությունների սակագներ»-ի):
20. **ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝** ՁԵՐ ՀԱՇՎՈՒՄ ԱՌԿԱ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԵԿԱՄՈՒՏ ԿՍՏԱՆԱՅԻՔ ԴՈՒՔ, ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ԱՎԱՆԴԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՍԱՀՄԱՎԱԾ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ՎԱՍՏԱԿԱԾ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄԱԲԵՐՈՒԹՅԱՄ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԿԱՐՈՂ ԵՔ ԳՏՆԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԱՍՑԵՈՒՄ՝Տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկ:

21. Տարեկան տոկոսային եկամտաբերությունը (APY)՝ հաշվարկված առանց եկամտային հարկի, 1% տարեկան պարզ տոկոսադրույքի դեպքում՝ APY=1.0%:

$$A = \sum_{n=1}^{N} \frac{K_n}{(1 + APY)^{\frac{D_n}{365}}},$$

որտեղ՝

APY-ն տարեկան տոկոսային եկամտաբերությունն է,

A-ն՝ ավանդի սկզբնական գումարը,

n-ը՝ ավանդի դիմաց դրամական հոսքերի հերթական համարը,

N-ը՝ ավանդի դիմաց դրամական հոսքերի վերջին համարը (ներառյալ նաև ավանդի ներդրման պահին դրամական հոսքը), որից հետո ավանդային պայմանագրի ժամկետը համարվում է ավարտված,

Kn-ը՝ ավանդի ներդրման պահին և/կամ ավանդի գործողության ընթացքում ներդրված ավանդի և/կամ կապիտալացված տոկոսագումարների, առկայության դեպքում պարտադիր վճարների հոսքերը,

Dn-ը այն թիվն է, որը ցույց է տալիս, թե քանի օր է անցել ավանդի ներդրման օրից մինչև ավանդի դիմաց կատարվող հերթական՝ n-րդ դրամական հոսքերը ներառյալ: Այն դեպքում, երբ ավանդի ներդրման պահին է դրամական հոսքերը, D1 = 0:

22. Տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկի օրինակ.

Ավանդի ներդնման օրը՝ 11.12.2017թ.
Ավանդի գումարը՝ 100,000 ՀՀ դրամ
Տարեկան տոկոսադրույքը՝ 1.00%
Ավանդի ժամկետը՝ 365 օր
Եկամտային հարկի չափը՝ 10%
Հաշվարկված տոկոսագումարը՝ 100,000 x 1.00% : 365 x 364 = 997.26
Եկամտային հարկը՝ 997.26 x 10% = 99.73
Ավանդատուի ստացած տոկոսային եկամուտը՝ 897.53 ՀՀ դրամ

23. Ավանդը ձևակերպելու համար բանկ է ներկայացվում հետևյալ փաստաթղթերը
    - ✓ անձը հաստատող փաստաթուղթ
    - ✓ հանրային ծառայությունների համարանիշ կամ ՀԾՀ չստանալու վերաբերյալ տեղեկանք
24. Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է «Ճանաչիր քո հաճախորդին» սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ տեղեկություններ:
25. Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (FATCA) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն Բանկը հաճախորդի ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է լրացուցիչ տեղեկություններ հավաքագրել:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ

Հավելված 3
Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության
2019 թվականի դեկտեմբերի 27-ի N 547-Լ որոշմամբ
Գործում է սկսած 2020 թվականի հունվարի 1 –ից

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել:

Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք Բանկի կայքում, խնդրում ենք ուշադրություն դարձնել տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին:

Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք Բանկի տարածքում կամ թղթային տարբերակով, մանրամասն տեղեկությունների համար խնդրում ենք այցելել Բանկի ինտերնետային կայք՝ www.idbank.am հասցեով (ուշադրություն դարձնելով տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին), դիմել Բանկի ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարել Բանկի հեռախոսազանգերի կենտրոն՝ 010 59 33 33 , 060 27 33 33 համարով:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ
«ԲԻԶՆԵՍ ԱՊԱՀՈՎ» ԱՎԱՆԴԱՏԵՍԱԿԻ

1. Իրավաբանական անձանցից և անհատ ձեռնարկատերերից ներգրավված “ԲԻԶՆԵՍ ԱՊԱՀՈՎ» ժամկետային ավանդի տարեկան տոկոսադրույքները **<u>առանց ավելացման իրավունքի</u>** ներդնման դեպքում.

Տարեկան անվանական տոկոսադրույք ***(առանց ավելացման իրավունքի)***								
Տոկոսների վճարման հաճախականություն								
Արժույթ	ՀՀ դրամ		ԱՄՆ դոլար		Եվրո		Ռուբլի	
Ավանդի ժամկետ	**Ամսական**	**Ժամկետի վերջում**	**Ամսական**	**Ժամկետի վերջում**	**Ամսական**	**Ժամկետի վերջում**	**Ամսական**	**Ժամկետի վերջում**
31-60 օր	**-**	**4.00%**	**-**	**0.50%**	**-**	**0.25%**	**-**	**4.00%**
61-90 օր	**-**	**4.50%**	**-**	**1.00%**	**-**	**0.50%**	**-**	**4.25%**
91-120 օր	**4.50%**	**5.00%**	**1.00%**	**1.50%**	**0.50%**	**0.75%**	**4.00%**	**4.50%**
121-150 օր	**5.00%**	**5.50%**	**1.25%**	**1.75%**	**0.50%**	**0.75%**	**4.25%**	**4.75%**
151-180 օր	**5.50%**	**6.00%**	**1.25%**	**1.75%**	**0.75%**	**1.00%**	**4.50%**	**5.00%**
181-210 օր	**6.00%**	**6.50%**	**2.00%**	**2.50%**	**1.00%**	**1.25%**	**4.75%**	**5.25%**
211-240 օր	**6.00%**	**6.50%**	**2.00%**	**2.50%**	**1.00%**	**1.25%**	**5.00%**	**5.50%**
241-270 օր	**6.50%**	**7.00%**	**2.00%**	**2.50%**	**1.25%**	**1.50%**	**5.25%**	**5.75%**
271-300 օր	**6.50%**	**7.00%**	**2.75%**	**3.25%**	**1.25%**	**1.50%**	**5.50%**	**6.00%**
301-330 օր	**7.00%**	**7.50%**	**2.75%**	**3.25%**	**1.25%**	**1.50%**	**5.75%**	**6.25%**
331-365 օր	**7.00%**	**7.50%**	**2.75%**	**3.25%**	**1.25%**	**1.50%**	**6.00%**	**6.50%**
366-730 օր	**7.75%**	**8.25%**	**3.50%**	**4.00%**	**1.50%**	**1.75%**	**-**	**-**

2. Իրավաբանական անձանցից և անհատ ձեռնարկատերերից ներգրավված «ԲԻԶՆԵՍ ԱՊԱՀՈՎ» ժամկետային ավանդի տարեկան տոկոսադրույքները **<u>ավելացման իրավունքով</u>**

Տարեկան անվանական տոկոսադրույք ***(ավելացման իրավունքով)***								
Տոկոսների վճարման հաճախականություն								
Արժույթ	ՀՀ դրամ		ԱՄՆ դոլար		Եվրո		Ռուբլի	
Ավանդի ժամկետ	**Ամսական**	**Ժամկետի վերջում**	**Ամսական**	**Ժամկետի վերջում**	**Ամսական**	**Ժամկետի վերջում**	**Ամսական**	**Ժամկետի վերջում**
91-120 օր	**4.00%**	**4.50%**	**0.50%**	**1.00%**	**-**	**0.25%**	**3.00%**	**3.50%**
121-150 օր	**4.50%**	**5.00%**	**0.75%**	**1.25%**	**-**	**0.25%**	**3.25%**	**3.75%**
151-180 օր	**5.00%**	**5.50%**	**0.75%**	**1.25 %**	**0.25%**	**0.50%**	**3.50%**	**4.00%**
181-210 օր	**5.50%**	**6.00%**	**1.50%**	**2.00%**	**0.50%**	**0.75%**	**3.75%**	**4.25%**
211-240 օր	**5.50%**	**6.00%**	**1.50%**	**2.00%**	**0.50%**	**0.75%**	**4.00%**	**4.50%**
241-270 օր	**6.00%**	**6.50%**	**1.50%**	**2.00%**	**0.75%**	**1.00%**	**4.25%**	**4.75%**
271-300 օր	**6.00%**	**6.50%**	**2.25%**	**2.75%**	**0.75%**	**1.00%**	**4.50%**	**5.00%**
301-330 օր	**6.50%**	**7.00%**	**2.25%**	**2.75%**	**0.75%**	**1.00%**	**4.75%**	**5.25%**
331-365 օր	**6.50%**	**7.00%**	**2.25%**	**2.75%**	**0.75%**	**1.00%**	**5.00%**	**5.50%**
366-450 օր	**7.25%**	**7.75%**	**3.00%**	**3.50%**	**1.00%**	**1.25%**	**-**	**-**

3. Առանց ավելացման իրավունքի 731 օր և ավել ժամկետով ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով, Եվրոյով, 366 օր և ավել ժամկետով ՌԴ ռուբլով ներգրավվող, ավելացման իրավունքով 451 օր և ավել ժամկետով ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով, Եվրոյով, 366 օր և ավել ժամկետով ՌԴ ռուբլով ներգրավվող ավանդների և/կամ 100 000 000 (հարյուր միլիոն) ՀՀ դրամը, 200 000 (երկու հարյուր հազար) ԱՄՆ դոլարը, 200 000 (երկու հարյուր հազար) եվրոն, 12 000 000 (տասներկու միլիոն) ՌԴ ռուբլին գերազանցող ավանդների տարեկան տոկոսադրույքը և սպասարկման պայմանները սահմանվում են լրացուցիչ պայմանավորվածությամբ:
4. Ավանդի նվազագույն չափը սահմանվում է 1,000,000 ՀՀ դրամ կամ 2,000 ԱՄՆ դոլար կամ 2,000 Եվրո, 120,000 ՌԴ ռուբլի, որը պետք է պահպանվի սույն ամփոփագրի 1-ին կամ 2-րդ կետերում նշված տոկոսները ստանալու համար:
5. Ավելացման իրավունքով ավանդի գումարը կարող է ավելացվել առանց քանակային սահմանափակումների և ավելացումների արդյունքում այն չի կարող գերազանցել 100,000,000 (հարյուր միլիոն) ՀՀ դրամը, 200,000 (երկու հարյուր հազար) ԱՄՆ դոլարը, 200,000 (երկու հարյուր հազար) եվրոն, 12,000,000 (տասներկու միլիոն) ՌԴ ռուբլին: Ավանդային պայմանագրի գործողության ընթացքում ավելացված գումարի նկատմամբ տոկոսների հաշվարկը կատարվում է ավանդային պայմանագրով սահմանված տոկոսադրույքով, բացառությամբ ավանդի գործողության ժամկետի վերջին 90 օրը, որի համար տոկոսների հաշվարկը կատարվում է տվյալ պահին Բանկում գործող տվյալ արժույթի ցպահանջ տոկոսադրույքով:
6. Ավանդի նկատմամբ հաշվարկված տոկոսները վճարվում են ամսական հաճախականությամբ կամ ժամկետի վերջում:
7. Ցանկացած արժույթով ավանդ ներդնելիս բացվում է ՀՀ դրամով բանկային հաշիվ:
8. Արտարժույթով ներդրված ավանդի տոկոսագումարներն ավանդատուի ցանկությամբ կարող են վճարվել այն արտարժույթով, որով ներգրավվել է ավանդը, բացառությամբ՝ ՀՀ ԿԲ կողմից

սահմանված դեպքերի: Արտարժույթով ներդրված ավանդի դեպքում, եթե ավանդատուն ցանկություն չի հայտնել ավանդի տոկոսների վճարումը ստանալ տվյալ արտարժույթով, ապա տոկոսագումարները վճարվում են ՀՀ դրամով վճարման պահին Բանկում տվյալ արտարժույթի համար սահմանված առքի փոխարժեքով:

9. Ավանդը ժամկետից շուտ պահանջելիս կատարվում է տոկոսագումարի վերահաշվարկ տվյալ պահին Բանկում գործող տվյալ արժույթի ցպահանջ ավանդի տոկոսադրույքով:
10. Մինչ այդ ավանդատուին վճարված (բանկային հաշվին կամ այլ պարտավորություններ հաշվին փոխանցված) տոկոսագումարները գերազանցելու դեպքում տարբերության չափով գումար է գանձվում հետ վերադարձվող ավանդի գումարից, պակաս լինելու դեպքում տոկոսագումարների տարբերությունը վճարվում է ավանդատուին:
11. Պայմանագրով սահմանված տոկոսադրույքը հաշվարկվում է ավանդի օրական մնացորդի նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:
12. Բանկային ավանդի գումարի նկատմամբ տոկոսները հաշվեգրվում են ավանդը ներդնելու հաջորդ օրվանից մինչև այն ավանդատուին վերադարձնելու կամ ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրը:
13. Ավանդային պայմանագրի կնքման ժամանակ ավանդատուի գրավոր դիմումի հիման վրա ավանդային պայմանագրի գործողության ընթացքում հաշվարկված տոկոսագումարը կարող է ավելացվել ավանդի գումարին պայմանագրով նշված տոկոսների վճարման հաճախականությամբ:
14. Ավանդատուի ցանկությամբ՝ ավանդի պայմանագրի գործողության ժամկետի ավարտից հետո այն կարող է երկարաձգվել տվյալ պահին Բանկում գործող այդ ավանդատեսակի համար տեղեկատվական ամփոփագրով սահմանված պայմաններով (մասնավորապես՝ ավանդային պայմանագրի երկարաձգվող ժամկետին համապատասխանող տվյալ արժույթի առավելագույն տոկոսադրույքով, իսկ տոկոսագումարների վճարման պարբերականության/հաճախականության փոփոխության դեպքում, երբ նախորդ տեղեկատվական ամփոփագրում նշված տոկոսագումարների վճարման հաճախականությունը նշված չէ նոր (գործող) տեղեկատվական ամփոփագրում, ապա ավանդային պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգվում է տոկոսագումարների վճարման ամենամոտիկ, հաճախականությամբ): Ավանդային պայմանագրի ժամկետի ավարտից հետո ժամկետային ավանդի գումարը չպահանջելու դեպքում գումարը փոխանցվում է ավանդատուի ցպահանջ հաշվին՝ տվյալ պահին Բանկում գործող ցպահանջ ավանդի պայմաններով, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով:
15. Բանկը չի կարող ավանդային պայմանագրով որոշված տոկոսագումարների չափը միակողմանի նվազեցնել, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:
16. Բանկն իրավունք ունի միակողմանի փոխել ցպահանջ ավանդների և բանկային հաշվում եղած դրամական միջոցների համար վճարվող տոկոսների չափը՝ վերջինիս վերաբերյալ տեղեկատվությունը ուժի մեջ մտնելու օրվանից 15 օր առաջ Բանկի պաշտոնական կայքէջում հրապարակելու միջոցով:
17. Ավանդային պայմանագրի շուրջ ծագած վեճերը կարգավորվում են կողմերի միջև բանակցությունների միջոցով, իսկ նման համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
18. Բանկի կողմից հեռահար սպասարկումն իրականացվում է IDBanking առցանց համակարգի միջոցով: Բանկի հեռահար սպասարկման ծառայությունների մատուցման կարգն ու պայմանները

ներկայացված են «Հեռահար բանկային ծառայությունների մատուցման հրապարակային պայմաններում»:

19. **Հաճախորդն իրավունք ունի Բանկի հետ հաղորդակցվել իր նախընտրած տարբերակով՝ էլ. փոստ կամ փոստային կապ: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումը ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիություն:**

20. Ավանդային հաշվից քաղվածքները տրամադրվում են հաճախորդին առնվազն ամիսը 1 անգամ՝ երեսնօրյա պարբերականությամբ, եթե պայմանագրով կամ օրենքով այլ ժամկետ սահմանված չէ:
21. Ավանդատուի բանկային հաշվին անկանխիկ ձևով մուտքագրված դրամական միջոցները, որոնք ուղղվել են ավանդային հաշվին, հետագայում բանկային հաշվից կանխիկ ետ ստանալու դեպքում ավանդատուից գանձվում է կանխիկացման միջնորդավճար՝ Բանկի կողմից հաստատված սակագների համաձայն:
22. Ավանդային հաշվից քաղվածքների և վճարային փաստաթղթերի կրկնօրինակների ու այլ տեղեկությունների տրամադրման սակագները սահմանվում են՝ ըստ իրականացված գործարքի ժամկետի վաղեմության, ընթացիկ հաշիվների քաղվածքների տրամադրման սակագների չափով (համաձայն ««ԱյԴի Բանկ» ՓԲԸ հաճախորդներին մատուցվող ծառայությունների սակագներ»-ի):
23. Անհատ ձեռնարկատերերից ներգրավված ավանդների դեպքում ի լրումն վերը նշվածի կիրառվում են նաև հետևյալ կետերը՝
    23.1. Բանկին վերապահված է ավանդի դիմաց ստացված տոկոսներից օրենքով սահմանված կարգով եկամտահարկը (10%) հաշվարկելու և վճարելու հարկային գործակալի իրավունքը:
    23.2. Ավանդատուն իրավունք ունի ավանդային գործարքից բխող պահանջները ներկայացնել ֆինանսական համակարգի հաշտարարին (Հասցե՝ 0010 ք. Երևան, Մ. Խորենացու փող. 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն 7-րդ հարկ Էլ. փոստ՝ info@fsm.am Հեռախոս՝ (+37460) 70 11 11, Ֆաքս՝ (+37410) 58 24 21)՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն, կամ դիմել դատարան (իսկ Բանկի և հաճախորդի միջև արբիտրաժային համաձայնության առկայության դեպքում՝ համապատասխան արբիտրաժային տրիբունալ) կամ ՀՀ կենտրոնական բանկ::
    23.3. Բանկը պարտավոր է ավանդատուի կողմից ներկայացված բողոք-պահանջը ստանալու պահից սկսած՝ 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում վերջինիս տրամադրել վերջնական պատասխան: Բանկի վերջնական, գրավոր պատասխանի հետ համաձայն չլինելու դեպքում այն ստանալու պահից կամ 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում իր բողոք-պահանջի պատասխանը չստանալու դեպքում ավանդատուն իրավունք է ձեռք բերում վեց ամսվա ընթացքում պահանջը ներկայացնել ֆինանսական համակարգի հաշտարարին: Ընդ որում, եթե գույքային պահանջի չափը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, ապա ֆինանսական համակարգի որոշումները չեն կարող վիճարկվել Բանկի կողմից
    23.4. Ավանդների վերադարձելիությունը երաշխավորվում է «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն:
    23.5. Ավանդի հատուցումը երաշխավորված է «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի» կողմից՝ հատուցման ենթակա ավանդների չափերով, մասնավորապես՝

«ԱՅԴԻ Բանկ»կ ՓԲԸ ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորված է «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի» կողմից՝ հատուցման ենթակա ավանդների չափերով, մասնավորապես՝				
Ավանդի արժութային կառուցվածքը	Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ	Եթե նույն բանկում ունեք միայն արտարժու-թային ավանդ	Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ	
			Եթե դրամային ավանդը 5 միլիոն դրամից ավել է	Եթե դրամային ավանդը 5 միլիոն դրամից պակաս է
Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	10 միլիոն ՀՀ դրամ	5 միլիոն ՀՀ դրամ	10 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)	5 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ հինգ միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով)

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ՀԱՇՎՈՒՄ ԱՌԿԱ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԵԿԱՄՈՒՏ ԿՍՏԱՆԱՅԻՔ ԴՈՒՔ, ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ԱՎԱՆԴԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՍԱՀՄԱՎԱԾ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ՎԱՍՏԱԿԱԾ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄԱԲԵՐՈՒԹՅԱՄ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԿԱՐՈՂ ԵՔ ԳՏՆԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԱՍՑԵՈՒՄ՝ Տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկ:

Տարեկան տոկոսային եկամտաբերությունը (APY)՝ հաշվարկված 366 օր ժամկետով, 1,000,000 ՀՀ դրամ ավանդի համար, առանց եկամտահարկի.

	Ամսական	**Ժամկետի վերջում**
Առանց ավելացման իրավունքի ներդնման դեպքում	8.03%	8.25%
Ավելացման իրավունքով ներդնման դեպքում	7.25%	7.75%

$$A = \sum_{n=1}^{N} \frac{K_n}{(1 + APY)^{\frac{D_n}{365}}},$$

որտեղ՝

APY-ն տարեկան տոկոսային եկամտաբերությունն է,

A-ն՝ ավանդի սկզբնական գումարը,

n-ը՝ ավանդի դիմաց դրամական հոսքերի հերթական համարը,

N-ը՝ ավանդի դիմաց դրամական հոսքերի վերջին համարը (ներառյալ նաև ավանդի ներդրման պահին դրամական հոսքը), որից հետո ավանդային պայմանագրի ժամկետը համարվում է ավարտված,

Kn-ը՝ ավանդի ներդրման պահին և/կամ ավանդի գործողության ընթացքում ներդրված ավանդի և/կամ կապիտալացված տոկոսագումարների, առկայության դեպքում պարտադիր վճարների հոսքերը,

Dn-ը այն թիվն է, որը ցույց է տալիս, թե քանի օր է անցել ավանդի ներդրման օրից մինչև ավանդի դիմաց կատարվող հերթական՝ n-րդ դրամական հոսքերը ներառյալ:

26. Ավանդը ձևակերպելու համար բանկ է ներկայացվում հետևյալ փաստաթղթերը

Հաշվի բացման (վերաբացման) համար իրավաբանական անձ հանդիսացող Հաշվետիրոջ լիազորված անձը պետք է սպասարկողին ներկայացնի հետևյալ փաստաթղթերը

- ✓ Հաշվետիրոջ պետական գրանցումը հավաստող փաստաթղթի պատճենը
- ✓ Հարկ վճարողի հաշվառման համարը կամ այլ համարժեք համարը (ոչ ռեզիդենտ Հաշվետերերի դեպքում) հավաստող փաստաթուղթ (առկայության դեպքում)
- ✓ Առանց լիազորագրի իրավաբանական անձի անունից գործելու իրավունք ունեցող անձանց համապատասխան պաշտոնի նշանակման փաստը հաստատող փաստաթղթի պատճենը (կարող է չներկայացվել Կենտրոնական դեպոզիտարիայի համաձայնության դեպքում),
- ✓ Իրավաբանական անձի անունից հանդես եկող անձի՝ անձը հաստատող փաստաթղթի պատճենը (անձնագիր կամ անձի իսկությունը հաստատող նույնականացման քարտ (ID CARD)
- ✓ Լիազորագրի հիման վրա գործող անձի դեպքում՝ նաև լիազորությունները հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ պատճենը:

27. Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է «Ճանաչիր քո հաճախորդին» սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ տեղեկություններ:
28. Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (FATCA) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն Բանկը հաճախորդի ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է լրացուցիչ տեղեկություններ հավաքագրել:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ

Հավելված 4
Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության
2019 թվականի դեկտեմբերի 27-ի N 547-Լ որոշմամբ
Գործում է սկսած 2020 թվականի հունվարի 1 –ից

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխված լինել:

Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք Բանկի կայքում, խնդրում ենք ուշադրություն դարձնել տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին:

Եթե Դուք ամփոփագրին ծանոթանում եք Բանկի տարածքում կամ թղթային տարբերակով, մանրամասն տեղեկությունների համար խնդրում ենք այցելել Բանկի ինտերնետային կայք՝ www.idbank.am հասցեով (ուշադրություն դարձնելով տեղեկատվական ամփոփագրի գործողության ամսաթվին), դիմել Բանկի ցանկացած մասնաճյուղ կամ զանգահարել Բանկի հեռախոսազանգերի կենտրոն՝ 010 59 33 33 , 060 27 33 33 համարով:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ
«ԲԻԶՆԵՍ ՑՊԱՀԱՆՋ» ԱՎԱՆԴԱՏԵՍԱԿԻ
(Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերի համար)

1. Սահմանել «ԱյԴի Բանկ» ՓԲԸ իրավաբանական անձանցից (այդ թվում նաև անհատ ձեռնարկատեր) ներգրաված ցպահանջ ավանդի տոկոսադրույքները.

Ժամկետ	Տարեկան պարզ տոկոսադրույք			
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	ՌԴ ռուբլի
Անժամկետ	1%	0.25%	0%	1%

2. Ավանդի նվազագույն չափը սահմանվում է 100,000 (հարյուր հազար) ՀՀ դրամ կամ դրան համարժեք ԱՄՆ դոլար, Եվրո ՌԴ ռուբլի, որը պետք է պահպանվի սույն ամփոփոագրի 1-ին կետում նշված տոկոսները ստանալու համար:
3. Ավանդային պայմանագրի ընթացքում ավանդատուն կարող է ավելացնել և նվազեցնել ավանդի գումարը, իսկ տոկոսադրույքը հաշվարկվում է ավանդի օրական մնացորդի նկատմամբ, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով
4. Ավանդի նկատմամբ հաշվարկված տոկոսները վճարվում են ամեն ամիս կամ պայմանագրում նշված ժամկետում:
5. Արտարժույթով ներդրված ավանդի տոկոսագումարներն ավանդատուի ցանկությամբ կարող են վճարվել այն արտարժույթով, որով ներգրավվել է ավանդը, բացառությամբ՝ ՀՀ ԿԲ կողմից սահմանված դեպքերի: Արտարժույթով ներդրված ավանդի դեպքում, եթե ավանդատուն ցանկություն չի հայտնել ավանդի տոկոսների վճարումը ստանալ տվյալ արտարժույթով, ապա տոկոսագումարները վճարվում են ՀՀ դրամով վճարման պահին Բանկում տվյալ արտարժույթի համար սահմանված առքի փոխարժեքով:

6. Ավանդի նկատմամբ տոկոսներ հաշվեգրվում են ավանդը ներդնելու հաջորդ օրվանից մինչև այն ավանդատուին վերադարձնելու կամ ավանդատուից հաշվից այլ հիմքերով դուրս գերելու օրվան նախորդող օրը:
7. Ավանդային պայմանագրի կնքման ժամանակ ավանդատուի գրավոր դիմումի հիման վրա ավանդային պայմանագրի գործողության ընթացքում հաշվարկված տոկոսագումարը կարող է ավելացվել ավանդի գումարին պայմանագրով նշված տոկոսների վճարման հաճախականությամբ:
8. Բանկն իրավունք ունի միակողմանի փոխել ցպահանջ ավանդների և բանկային հաշվում եղած դրամական միջոցների համար վճարվող տոկոսների չափը՝ վերջինիս վերաբերյալ տեղեկատվությունը ուժի մեջ մտնելու պահից 15 օր առաջ Բանկի պաշտոնական կայքէջում հրապարակելու միջոցով:
9. Ավանդային պայմանագրի շուրջ ծագած վեճերը կարգավորվում են կողմերի միջև բանակցությունների միջոցով, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
10. **Հաճախորդն իրավունք ունի Բանկի հետ հաղորդակցվել իր նախընտրած տարբերակով՝ էլ. փոստ կամ փոստային կապ: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումը ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիություն:**
11. Ավանդային հաշվից քաղվածքների և վճարային փաստաթղթերի կրկնօրինակների ու այլ տեղեկությունների տրամադրման սակագները սահմանվում են՝ ըստ իրականացված գործարքի ժամկետի վաղեմության, ընթացիկ հաշիվների քաղվածքների տրամադրման սակագների չափով (համաձայն ««ԱյԴի Բանկ» ՓԲԸ հաճախորդներին մատուցվող ծառայությունների սակագներ»-ի):
12. Ավանդային հաշվից քաղվածքները տրամադրվում են հաճախորդին առնվազն ամիսը 1 անգամ՝ երեսնօրյա պարբերականությամբ, եթե պայմանագրով կամ օրենքով այլ ժամկետ սահմանված չէ:
13. Անհատ ձեռնարկատերերից ներգրավված ավանդների դեպքում ի լրումն վերը նշվածի կիրառվում են նաև հետևյալ կետերը՝
    1) Ավանդների վերադարձելիությունը երաշխավորվում է «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի համաձայն:
    2) Ավանդի հատուցումը երաշխավորված է «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի» կողմից՝ հատուցման ենթակա ավանդների չափերով, մասնավորապես՝

«ԱյԴի Բանկ»կ ՓԲԸ ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորված է «Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի» կողմից՝ հատուցման ենթակա ավանդների չափերով, մասնավորապես՝				
Ավանդի արժութային կառուցվածքը	Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ	Եթե նույն բանկում ունեք միայն արտարժու-թային ավանդ	Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ	
			Եթե դրամային ավանդը 5 միլիոն դրամից ավել է	Եթե դրամային ավանդը 5 միլիոն դրամից պակաս է

Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	10 միլիոն ՀՀ դրամ	5 միլիոն ՀՀ դրամ	10 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)	5 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժութային ավանդը՝ հինգ միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով)

3) Բանկին վերապահված է ավանդի դիմաց ստացված տոկոսներից օրենքով սահմանված կարգով եկամտահարկը (10%) հաշվարկելու և վճարելու հարկային գործակալի իրավունքը:
4) Ավանդատուն իրավունք ունի ավանդային գործարքից բխող պահանջները ներկայացնել ֆինանսական համակարգի հաշտարարին (Հասցե՝ 0010 ք. Երևան, Մ. Խորենացու փող. 15, «Էլիտ Պլազա» բիզնես կենտրոն 7-րդ հարկ էլ. փոստ՝ info@fsm.am Հեռախոս՝ (+37460) 70 11 11, Ֆաքս՝ (+37410) 58 24 21)՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն, կամ դիմել դատարան (իսկ Բանկի և հաճախորդի միջև արբիտրաժային համաձայնության առկայության դեպքում՝ համապատասխան արբիտրաժային տրիբունալ) կամ ՀՀ կենտրոնական բանկ:
5) Բանկը պարտավոր է ավանդատուի կողմից ներկայացված բողոք-պահանջը ստանալու պահից սկսած՝ 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում վերջինիս տրամադրել վերջնական պատասխան: Բանկի վերջնական, գրավոր պատասխանի հետ համաձայն չլինելու դեպքում այն ստանալու պահից կամ 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում իր բողոք-պահանջի պատասխանը չստանալու դեպքում ավանդատուն իրավունք է ձեռք բերում վեց ամսվա ընթացքում պահանջը ներկայացնել ֆինանսական համակարգի հաշտարարին: Ընդ որում, եթե գույքային պահանջի չափը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, ապա ֆինանսական համակարգի որոշումները չեն կարող վիճարկվել Բանկի կողմից:

14. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ՀԱՇՎՈՒՄ ԱՌԿԱ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԵԿԱՄՈՒՏ ԿՍՏԱՆԱՅԻՔ ԴՈՒՔ, ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ԱՎԱՆԴԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՍԱՀՄԱՎԱԾ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ՎԱՍՏԱԿԱԾ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄԱԲԵՐՈՒԹՅԱՄ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԿԱՐՈՂ ԵՔ ԳՏՆԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԱՍՑԵՈՒՄ ՝ Տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկ:

15. Տարեկան տոկոսային եկամտաբերությունը (APY)՝ հաշվարկված 365 օր ժամկետով, 100,000 ՀՀ դրամ ավանդի համար, տոկոսագումարների վճարումը՝ ամսական, առանց եկամտահարկի կազմում է 1.005%.

$$A = \sum_{n=1}^{N} \frac{K_n}{(1 + APY)^{\frac{D_n}{365}}},$$

որտեղ՝

APY-ն տարեկան տոկոսային եկամտաբերությունն է,

A-ն՝ ավանդի սկզբնական գումարը,

n-ը՝ ավանդի դիմաց դրամական հոսքերի հերթական համարը,

N-ը՝ ավանդի դիմաց դրամական հոսքերի վերջին համարը (ներառյալ նաև ավանդի ներդրման պահին դրամական հոսքը), որից հետո ավանդային պայմանագրի ժամկետը համարվում է ավարտված,

Kn-ը՝ ավանդի ներդրման պահին և/կամ ավանդի գործողության ընթացքում ներդրված ավանդի և/կամ կապիտալացված տոկոսագումարների, առկայության դեպքում պարտադիր վճարների հոսքերը,

Dn-ը այն թիվն է, որը ցույց է տալիս, թե քանի օր է անցել ավանդի ներդրման օրից մինչև ավանդի դիմաց կատարվող հերթական՝ n-րդ դրամական հոսքերը ներառյալ:

29. Ավանդը ձևակերպելու համար բանկ է ներկայացվում հետևյալ փաստաթղթերը

Հաշվի բացման (վերաբացման) համար իրավաբանական անձ հանդիսացող Հաշվետիրոջ լիազորված անձը պետք է սպասարկողին ներկայացնի հետևյալ փաստաթղթերը

- ✓ Հաշվետիրոջ պետական գրանցումը հավաստող փաստաթղթի պատճենը
- ✓ Հարկ վճարողի հաշվառման համարը կամ այլ համարժեք համարը (ոչ ռեզիդենտ Հաշվետերերի դեպքում) հավաստող փաստաթուղթ (առկայության դեպքում)
- ✓ Առանց լիազորագրի իրավաբանական անձի անունից գործելու իրավունք ունեցող անձանց համապատասխան պաշտոնի նշանակման փաստը հաստատող փաստաթղթի պատճենը (կարող է չներկայացվել Կենտրոնական դեպոզիտարիայի համաձայնության դեպքում),
- ✓ Իրավաբանական անձի անունից հանդես եկող անձի՝ անձը հաստատող փաստաթղթի պատճենը (անձնագիր կամ անձի իսկությունը հաստատող նույնականացման քարտ (ID CARD)
- ✓ Լիազորագրի հիման վրա գործող անձի դեպքում՝ նաև լիազորությունները հավաստող փաստաթղթի բնօրինակը կամ պատճենը:

30. Բանկը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է «Ճանաչիր քո հաճախորդին» սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ տեղեկություններ:

31. Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (FATCA) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն Բանկը հաճախորդի ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է լրացուցիչ տեղեկություններ հավաքագրել:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ԲԱՆԿԸ ՎԵՐԱՀՍԿՎՈՒՄ Է ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ